



125-262

ԱՏԻՆԻ ԱՍՊԵՏԻՆ

Գ Տ Ա Տ

ԿՐԹԱԿԻ ՄԵԶ ԱՆՎՆԱՍ ՄՆԱԼՈՒ

9202-57

Գ Ի Ի Տ Բ



ՎՆՆԵՏԻԿ

ՍՈՒՐԻ ԳԱԶԱՐՈՒ ՏՊԱՐԱՆԸ

1834

12004





1915

Printed in Turkey

ԱՍՏՆԻ ԱՍՊԵՏԻՆ

Գ Ր Ա Տ

ՀԱՄԼՈՒՑՑ ՏՆՊ ԵՒՈՒԹԻՒՆԵՐ

ԿՐԱԿԻ ՄԷՋ ՉԻՎՆԱՍՈՒԵԼՈՒ

ՀԱՄԱՐ

ՈՐ ՍՏԱՄՊՈԼՅՈՑ ՀԱՐԿԱՒՈՐ ԿՐՆԱՅ ԸԼԼԱՎ



Սարգիկ Թէպէտ և սիրտ ըրին օդու ու ջրի մէջ ճամբայ ընելու, բայց մինչև հիմայ կրակին սաստկութեանը դէմ ճար մը չի գտան: Բայց ես կարծեմ դիւրաւ կրնայ ճարը գրտնըլիլ Ստամպուլու կրակներուն մէջ գոնէ մարդուս կեանքը ու ունեցածը խալըսելու համար:

Գիտնալու է որ երկրթէ հիւսած զգեստը, որ հին ատենը պատերազմի մէջ կը հագնէին, չի Թողուր կրակին բոցը ներս անցնելու: Աս ալ գիտնալու է որ Ասբեստ ըսուած նիւթ մը կայ, որ խիստ դժուարաւ կէրի. քար կը նմանի, բայց կը մանուի ու կը հիւտուի: Ասկէց 'ի զատ պաղլեղի

շառի ջրով տողորած, ու ուրիշ շատ կերպով ալ զգեստներ կըշինուի՝ որ դժուարաւ կայրին. նաև բրդէ ու ամիանթէ* հիւսած զգեստներն ալ վրանին թելով ցանցատեսակ Խաֆէաթէ ունենան նէ, շատ ուշ կըտաքնան կրակէն: Սովորական օրինակ մը տանք. թէ որ ծխի փատին լիւլէին վրայ (Ձև 1.) թելէ հիւսած ծածք մը ըլլայ նէ, որչափ կրակին բոցին բռնես՝ ծխախոտը չէրիր. նաև թէ որ կրակ մը լիւլէին մէջը դնես, որ թելէ հիւսած ծածք ունենայ, վրան որչափ խոտ կամ ուրիշ դիւրաւ այրելու բան դնես նէ՝ չէրեր: Մի և նոյն բոցն ալ, քովի եղած բաներէն կոտրելով իր ուժը, միշտ նոյն սաստկութիւն չաղդեր մէկ բանի մը վրայ. երբեմն (Ձև 2.) կաթիլ մը ջուրը ինչպէս որ է նէ կըթողու, ու երբեմն շուտ մը կըցամբեցնէ: Աս բաներէս մակաբերելով ճարը գտայ, որ թէպէտ բոլորովին կրակին բոցին տաքութիւնը չարդելու ալ նէ՝ շատ կուշացնէ էրելը. որով կրակ մարդները ատեն կուսնենան՝ խեղճ կրակին մէջը մնացողները խալըսելու: Ուստի հիմայ իմ գտած հընարքներս համառօտ մը բացատրեմ:

Ա. Մարդս վարժելու համար՝ որ սիրտ ընէ բոցի մէջ մտնալու, անցընէ մէկ մատին վրայ ամիանթէ հիւսած պատեան Խուլֆ մը, վրան երկրթէ թելէ երկու խաթ ցանց Բօտ պատած, ու բռնէ մոմին բոցին վրայ շիփ շխտակ. (Ձև 3.) կըփորձէ որ շորս հինգ վայրկեան Բաթիէ կըդիմանայ առանց այրելու. իսկ թէ որ քովնտի բռնէ բոցին վրայ նէ, շատ աւելի կըդիմանայ: Ուստի աս փորձով, որչափ վախ կոտ մարդ ըլլայ նէ՝ սիրտ կընէ, աս կերպ զգեստ հաղնելով կրակին մէջն ալ մտնալու:

* Ամիանթը այնպիսի քար մը նէ, որ քթանի պէս կըմանիլի. ու անկէց շինած լաթը կրակի մէջ ձգես նէ՝ չէրիր:

Բ. Կրակ մարողները զիրենք կրակին բոցէն պաշտպանելու համար՝ բռնեն զիմացնին մէկ վահան խալտան մը, որ երկրթէ գաւազաններով անուի Բէթէլէի պէս շինած ըլլայ, ու վրան ալ երկրթէ հիւսած երկու խաթ ցանց հագցուցած ըլլայ: Ասիկայ կրակին բոցը չի թողուր որ իրենց դըպչի, ու քիչ տաքութիւն կը զգան. թեթև ալ ըլլալով աս վահանը՝ զիւրին կը ըլլայ գործածելը, ու նաև զիմացի եղած բաներնին ալ տեսնելու արգելք չըլլար:

Գ. Մէկ հիւանդ մը իր մօտի խըցին կրակէն խալտելու համար, պէտք է մէկ երկրթէ թելով հիւսած (Ձև 4.) ճկուն ու զիւրաւ տարուելու վարագոյր մը ունենալ, չորս դին օղակներով շինած, որ մէկէն՝ բռնկած խուցին դրանը անցըվի. ասով թէ որ խուցը քարուկիր է նէ՝ բոցը անկէց դուրս չելէր, ու հիւանդին խուցը շանցնիր:

Դ. Թէ որ կուղես գլուխդ բոցին մէջ խոթած՝ շունչ առնել նէ, անցուր երեսդ մէկ ամիսնթէ հիւսած զիմակ սոսաթ մը, որուն բերնին ու աչվըներուն ծակերը երկրթէ թելով հիւսած երկու խաթ ցանցով գոցված ըլլայ. վրայէն ալ ընդարձակ զլխարկ մը (Ձև 6.) մինչև ուսերդ հասնող, թելէ հիւսած երկու խաթ. անանկ ամուր ըլլայ որ, վրան բանմը իյնի նէ՝ ուժը ուսերուդ վրայ դայ, ու գլուխդ չի վնասուի: Աս զգուշութեամբ կրնաս հինգ վեց վայրկեան զիմանալ կրակին ալ սաստիկ տաքութեանը, քան ինչ որ կը զգայ մարդ բոցին մէջէն անցնելով:

Ե. Իսկ թէ որ կրակին հետ մուխ ալ ըլլայ նէ՝ ինչպէս զիմանալու է կըսես նէ, զիտցիր որ մարդս խիստ տաքցուցած թոնիրին մէջն ալ կը բնայ կենալ ու շնչել. նա և կրակ մարողները չորս դին բոց պատած դոց խըցի մէջ երկան

ատեն կրնան կոր դիմանալ, բերաննին ըսպունգ փանկեր առած կամ կաշիէ խողովակ պոռոտ մը, որուն ծարր մինչև գետին կը հասնի: Իսկ երկրթէ հիւսած ցանցը ու ամիանթն ալ աւելի կը կոտորեն կրակին ուժը:

Չ. Որպէս զի կրակ մարողները համարձակ բոցի մէջ մըտնելը վարժին, կրնան կերպ կերպ հնարք բանեցընել. բայց ինչ որ ես փորձեցի նէ, հիմըկու հիմայ ան ըսեմ: Գլուխնին վերի ըսած գըլխարկնիս հագնին հանդերձ դիմակովը, ու մարմիններնուն վրայ հագնին ամիանթ կամ պաղլեղի ջրով տոգորած չուխայէ զգետոր: Բայց թէ որ չուխայ հագնին նէ՝ պէտք է վրայէն երկրթէ թելով հիւսած ըլլայ, որպէս զի բոցին տաքութիւնը շուտ չիցամբեցընէ չուխան (Չև 7.): Իսկ թէ որ ամիանթէ զգետո հագնին նէ՝ հարկ չէ որ թելէ հիւսած ցանցը ունենան բոլոր մարմիններնուն վրայ, այլ գլխընուն վրայ միայն բաւական է. բայց առջի կերպը աւելի ապահով է մեծ կրակներու մէջ:

Ամենեկին վտանգէ մը վախ չունենալու համար՝ աս փորձն ալ ըսեմ որ վառեակներ փէլէճներ, աղանիներ, ճագարներ Խալչաններ, ու ասոնց նման ուրիշ կենդանիներ, ամենին անմտոս կրակի բոցին մէջէն անցընողներ եղան, աս վերի ըսած կերպովս շինած վանդակի Խալչան մէջ դնելով:

Է. Կրակ կտրած բաները բռնելու համար՝ ամիանթէ հիւսած հաստ ձեռնոց մը (Չև 8.) պէտք է ունենալ, որպէս զի կրակին տաքութիւնը շուտ ներս չանցնի: Ասով կրնայ մարդ բռնել ու տանիլ կրակ կտրած երկաթներ, ու բանալ կամ փրցունել տաքցած կըղպակներ: Ասիկայ կըրնայ ծառայել նաև ան արուեստաւորներուն, որոնց գործքը տաքցուցած մետաղներու հետ է: Կաև ամիանթէ դիմակն ալ կրնայ ծառայել ձուլագործներուն փէլէճներու,

ապակադործներուն շէշէճիներուն, ու ասոնց նման արուեստաւորներուն . որպէս զի իրենց առողջութիւնը վնաս չըլլայ, կամ դոնէ քիչ վնասուին :

Ը. Բաճնկած մթերանոցին ճաշակային մէջէն ծանրազին բաներ խալըսելու համար, վերի ըսած կերպովնիս հագուել կրակին մէջը մըտնօղը, ու առնու հետը կողովի խի-Քէի պէս շինած ամիանթէ կամ պաղլեղի ջրով տոգորած չուխայէ աման մը (Չև 9. 10.) . ասոր մէջը դնելով խալըսելու բանը, ամենևին անվնաս դուրս կըրնայ հանել : Աս կերպով կրնայ մարդ նաև կրակ կտրած գետնի վրայ քալել, ու ամիանթէ հաստ ձեռնոցով բաճնկած սնտուկին մէջէն ալ արծաթ կամ ուրիշ ծանրազին բաներ առնուլ ու խալըսել : Աս կերպով նաև կրակը չորս դին առած ախոռներու մէջէն կրնայ մարդ խալըսել կենդանիները՝ որ պետոր էրէին :

Թ. Արակին մէջէն տղայ մը կամ ծեր մը կամ հիւանդոտ տկար մարդ մը խալըսելն ալ աս կերպով կըլլայ : Տղան վերի ըսած չուխայէս կամ ամիանթէ շինած կողովին մէջը դնելով դիւրին կըլլայ խալըսելը . միայն թէ բերանը թելէ հիւսած ծածք ունենայ (Չև 11, 12), ու երկու դօտի ալ որ դիւրին ըլլայ վերցընելը : Ալ աւելի դիւրութիւններ կրնայ ըլլուիլ մեծ մարդիկ խալըսելու համար, ինչպէս որ դրած պատկերներուս մէջը կերևնայ . (Չև 13. 14 :)

Ժ. Արակին վնասներէն ու վտանգէն խալըսելու համար, վերի ըսած օրինակնիս միտք պահելու է . այս ինքն լիւլէն թելէ հիւսած ծածք մը ունենայ նէ, մէջի եղած կրակը՝ որ չափ էրելու բաներ վրան դնես նէ՝ չէրեր : Ուրեմն աս թելէ հիւսած ցանցը կանթեղի մը բոցին չորս դին (Չև 15.)

քաշվելու ըլլայ նէ՝ քովի եղած բաները բռնակելու վտանդ չըլլար. մանաւանդ խոտնոցի մէջ, ու ասոր նման դիւրաւ էրելու բաներ դրուած տեղուանք: Նաև բամպակեղէնի ու տեսակ տեսակ օղիներ հանելու խանութները, նաև վառօդ պարուի եղած տեղուանք աս զգուշութիւն շատ հարկաւոր կրնայ ըլլալ:

Աս ըսածներուս փորձը ես անձամբ ըրի Իդալիայու շատ քաղերներ, նաև Ճինէւրա, Լօնտրա, Փարիզ, ու յաջողեցան: Փարիզ շատ ուրիշ փորձեր ալ ըրի վերի ըսած դիւտերս ցուցունելու համար: Երկու ցանկ (աւել) շինած պառէր կային հօն չոր ու դիւրաւ էրելու. երեսուն ոտք էր երկայնութիւննին, մէկըմէկէ ալ քիչ հեռու էին: Ասոնց բռնկած ատենը՝ երբոր բոցին բարձրութիւնը ինը ոտք վեր կելէր կոր, վեց հոգի ան ըսած զգեստներովս հագուած՝ ութը տարուան տղայ մը, պաղլեղի ջրով տոգորուած չուխայէ ամանին մէջը դրած, շատ անգամ անցուցին ան կրակին սոսկալի բոցին մէջէն, որուն տաքութեանը հեռուն կեցօղները չէին կրնար կոր դիմանալ: Աս փորձիս ատենը հօն էին փարիզու դպրոցը եղած բոլոր Մըսրի փաշային խըրկած առապի տղաքները: Կրակ մարօղներէն մէկը Լօնտրա աս կերպով դիմացաւ նաև դիւրաբորբօք ոգիքով վառված բոցին տաքութեանը, որ հիմայ դիշերները քաղաքը լուսաւորելու համար կըգործածուի, ու խտալերէն կըսվի էպէ Էֆէմմադէ. որուն ութը աւելի սաստիկ է քան զհասարակ կրակինը:

Կրասի զօրավարը առջինը եղաւ, որ Ֆիօրէնցա կրակ մարօղներուն օրինակ տըւաւ՝ բոցին մէջ անվնաս մըտնալու. ուստի անանկ սիրտ առին ուրիշները, որ իրենց որդիքը կրակին բոցին մէջը կըտանէին ու կըբերէին: Աս փորձը նաև Պօլօնեա ըրին, ու յաջողեցաւ: Աս տարի 1831 ին, փետրվարի մէջ Ճէզայիրներուն Տային Ալիկուռնա սիրով

ընդունեցաւ իմ դիւտերս, ու իր օռնջին՝ իրեն՝ քովի եղած տաճկըններէն մէկը՝ մատը բոցին վրան բռնած կեցաւ չորս հինգ վայրկեանի չափ, առանց ցաւ մը զգալու: Միւսնու կրակ մարողները բռնկած սանդուխներէ վեր կելէին, ու չորս դին բոց պատած ու մխով լեցուած խուցի մէջ առանց վնասուելու կենալով գործք կրտսնային: Եղան ուրիշներ ալ, որ քիչմը ատեն կրակի մէջ դիմացան ամիանթէ զգեստով միայն՝ առանց երկաթ թելէ հիւսած ցանցի, որով աւելի դիւրին կըլլայ կրակ մարողներուն զիրենք պաշտպանելը կրակին բոցէն ու մուխէն:

Շուէտներուն տէրութեանը մէջը, Ֆինլանտիա աշխրբին մայրաքաղաքը, որ Ապոյ կըսվի, մօտերս սաստիկ կրակ մը եղաւ, որ մէկ զիշերուան մէջը բոլոր քաղաքը մոխիր դարձուց: Անցած տարիները 1829 ին ու 1850 ին ես ալ աչքովս տեսայ կրակին շատ խեղճութիւնները Տիօն, Լիօն ու Լօնտրա քաղքերները:

Երկու երևելի անձինք ալ, քիչ ամիս է՝ որ Լօնտրա կրակին մէջը կորսրվեցան: Աս խեղճութիւնը ստեպ կրպատահի Ստամպուլու մէջ շատ տուներու, որ մէկ քանի ժամու մէջ մոխիր կըդառնան. ու չէ թէ միայն ծերեր ու հիւանդներ տներուն հետ կէրին, այլ և առողջ մարդիկ՝ չունենալով ճար մը զիրենք ու ունեցածնին խալըսելու: Ան խեղճութեան ատենը թէ որ այնչափ ախորժելի է ժողովրդեան՝ թագաւորին ըրածը, որ անձամբ կելլէ երկիւղածութեան ու կրակը մարողները յորդորելու համար նէ, որչափ աւելի սիրելի կըլլայ՝ թէ որ իր հետը ունենայ սորված ու վարժած մարդիկներ, որ իրենց արուեստին ամմէն հնարքով կրակին ըրած վնասները արգելուն:

Աս դիւտերուս փորձը տեսնըվելով, կրնայ ըլլալ որ՝ Երոպայէն Ասիայու ընդարձակ դաւառներն ալ տարածվին. որովհետև ուրիշի կեանքը խալըսելու սէրը, տեղւոյ վրայ

կապած չէ: Արարելի է որ աս իմ եղբայրսիրութեան գործքս
 հասնի մինչև անոր ձեռքն ալ, որ շատ դուլելի կերպով տաճ-
 կի տէրութիւնը կը կառավարէ կոր. ու ես ալ ուրախա-
 նամ, տեսնելով որ կըրցայ իմ ջանքովս սորվեցընել մարդ-
 կանց մէկ ճար մը՝ կրակին ըրած վնասները ու խեղճու-
 թիւնները քիցընելու, որ աշխրբիս մէջ խիստ վնասակար
 բաներուն մէկն է:



ՁԵՒԵՐՈՒՆ

Բ Ա Յ Ա Տ Ր ՈՒ Թ Ի Ի Ն Ը



1. Օսի փայտին լիւլէին մէջը կրակ դրած, ու երկը թէ թելէ հիւսած երկու խաթ ծածքով գոցած, որ վրան դրած խոտը ու ուրիշ էրեւու բաները չէրեր:
2. Բոցին ուժը կերպ կերպ գործածելը, որով ջրին կաթիլը ինչպէս որ է նէ՛ կըմընայ, կամ շուտ մը կըցընդի:
3. Թելէ հիւսած երկու խաթ պատեան խլւ՛Ք, մէջի կողմը ամիանթով պատած. որ թէ որ մատիդ անցունես նէ՛ քանի մը վայրկեան բոցին վրայ բըռնած կըդիմանաս:
4. Երկըթէ թելէ հիւսած երկու խաթ վարագոյր, բո՛ւն կած քարուկիր խուցի մը դուռը ծածկելու համար, որ բոցը քովի եղած խուցերը չանցնի:
5. Ամիանթէ շինած դիմակ սոստաթի մը, աչվըներուն ու բերնին տեղը ճըղբըված, ու ճըղբըված տեղերը թելէ երկու խաթ ցանցով թօռով գոցված:
6. Երկըթէ թելով հիւսած երկու խաթ ցանցէ գլխարկ, որ ամիանթէ շինած դիմակին վրայէն հագնելով երեւը կըծածկէ:

7. Երկրթէ թելով հիւսած զբահի պէս զգետ մը, պաղլեղի շափ ջրով տողորված չուխային վրայէն հագնելու համար * :
8. Ամիանթէ երկու խաթ ձեռնոց, կրակ կըտրած բաներ բռնելու ու տանելու բերելու համար :
9. Վարտիք ու կօշիկ՝ վրանին երկրթէ թելով հիւսած, որ կրակ կտրած գետնի վրայ քալելու համար կըհագնին, ու ձեռվրնին ալ ամիանթէ երկու խաթ ձեռնոցով կարմըրցած երկաթը կըբռնեն :
10. Բռնկած մթերանոցէն հաղապայէն ծանրագին բաներ խալըսելու համար՝ մըտնելու կերպը: Աւելի կըծառայէ աս բանիս՝ ունենալ ձեռքը երկաթ թելէ հիւսած երկու խաթ վահան Խալթան մը, որ կրակին բոցը մարդուս վրայէն մէկդի կընէ :
11. Ինչ կերպով պէտք է կրակին մէջը մնացօղները խալըսել :
12. Մայր մը էր որդին կըպարտըկէ կրակին մէջէն խալըսելու համար . ինչպէս որ փորձըվեցաւ 1829 ին Փարիզու մէջ. որ տըղունս գլուխը միայն ամիանթէ գլխարկմը անցընելով՝ թելէ հիւսած ծածքով ամանին մէջը խալըսեցաւ :

* Աս տարի 1831 ին, սեպտեմբերի մէջ, Վենետիկ ետքի ըրած փորձովիս տեսանք որ կրակին մէջէն առանց թելէ հիւսած զգետի ալ կանցնըլի կոր, միայն թըրջած չուխայով, ու ամիանթէ դիմակով, ու ձեռքը վահանով :

13. Ամիանթէ կամ պաղլեղի ջրով տողորած չուխայէ շինած ձկուռն քուրձ խարաբ մը, որ քան զթեղէ հիւսած կողովը տանելու բերելու համար աւելի դիւրաւ կը գործածվի :
14. Մէկզմէկու անցուցած ու ամուր երկաթ թելով պատած փայտեր, որոնց մէջ տեղը աթոռ մը շինած է՝ բռնկած տուռէ մարդ խալըսելու համար ** :
15. Կանթեղ մը, տան կամ խոտնոցի կամ մթերանոցի մէջ առանց վտանգի վառելու համար :

** Վերի ըսած փորձովն յայննի է, որ առանց մասնաւոր հագուստի՝ վահանովը միայն կրնայ մարդ ուրիշը կրակէն խալըսել. բաւական է որ անոր երեսը ամիանթէ գիմակ մը անցունէ, ու վրան տողորած չուխայէ վերարկու մը ձգէ. ու վերի ըսած կաշիէ դօտիններովը շալկէ տանի :



